ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» մայիսի 2014թ. N------Ա

ՈՐՈՇՈՒՄ

ՌԱՖԱՅԵԼ ԱԶԱՏՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԵՏ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 71-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի հ.286 որոշմամբ հաստատված կարգի 32–րդ կետով և հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 10-ի N95-Ն որոշումը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ Ռաֆայել Ազատյանին սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.19122012-01-1728 վկայական), Դավթաշեն 3-րդ թաղամասի հ.23/3 հասցեում տարածագնահատման 7-րդ գոտում գտնվող 420.9 քմ մակերեսով հողամասը փոխանակել Թևոսյան փողոցին հարակից տարածքում տարածագնահատման 7-րդ գոտում գտնվող 420.9 քմ մակերեսով համարժեք հողամասի հետ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ՌԱՖԱՅԵԼ ԱԶԱՏՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԵՏ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Քննարկվող նախագծով նախատեսվում է սեփականության իրավունքով Ռաֆայել Ազատյանին պատկանող տարածագնահատման 7-րդ գոտում, Դավթաշեն 3-րդ թաղամասի հ.23/3 հասցեում գտնվող 420.9 քմ մակերեսով հողամասը փոխանակել Թևոսյան փողոցին հարակից տարածքում նույն գոտում գտնվող 420.9 քմ մակերեսով համարժեք հողամասի հետ։

Հողամասերի փոխանակությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ փոխանակվող հատվածը գտնվում է անկանոն կառուցապատման գոտում և իր մասնատված ուրվագծի և մոտեցման բացակայության պատճառով հնարավոր չէ արդյունավետ օգտագործել, իսկ վերջինիս վրա շինարարական աշխատանքների թույլտվության տրամադրման պարագայում կարող է առաջանալ խիտ և անկանոն կառուցապատման վտանգ։ Ստեղծված իրավիճակում անհրաժեշտություն է առաջանում քաղաքաշինական առումով կանոնակարգել, լուծել տվյալ հատվածում գտնվող հողամասի սեպաձևության, մասնատվածության խնդիրը ինչը հնարավոր է ապահովել միայն հողամասերի փոխանակություն միջոցով։

Արդյունքում տվյալ հողամասի սեփականատիրոջն առաջարկվել է կատարել հողամասերի փոխանակում, ինչի արդյունքում հնարավոր կլինի ապահովել տվյալ հատվածի առավել արդյունավետ օգտագործումը և քաղաքաշինական առումով ստեղծել առավել կանոնակարգված հատված։

Փոխանակվող հողամասերը ընդգրկված չեն ՀՀ հողային օրենսգրքի օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի կազմում և գտնվում են Երևան քաղաքի հողերի տարածագնահատման 7-րդ գոտում։

Համաձայն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 71-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. ապրիլի 12-ի հ.286 որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի՝ համայնքի վարչական սահմաններում, համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասերը փոխանակվում են համայնքի ավագանու համաձայնությամբ՝ համայնքի ղեկավարի որոշման հիման վրա։

Ելնելով վերոգրյալից անհրաժեշտություն է առաջացել մշակելու համապատասխան ավագանու որոշում։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՌԱՖԱՅԵԼ ԱԶԱՏՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԵՏ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՌԱՖԱՅԵԼ ԱԶԱՏՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԵՏ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ